

Արձանագրություն N4

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

31.01.2017թ. նիստի

Օրակարգ

1. Անվանական կրթաթոշակների ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
2. Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքների կատարման ընթացքը:
3. 2016-2017 ուս. տարվա առկա և հեռակա ուսուցման 1-ին քննաշրջանի արդյունքների ամփոփում:
4. Պետական քննության հարցաշարի հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 60 անդամներից 40-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝

Ամբիոնի վարիչները ներկայացրեցին անվանական կրթաթոշակների ներկայացվող ուսանողների թեկնածությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետից անվանական կրթաթոշակի ներկայացնել հետևյալ ուսանողներին՝

1. Համլետ Ռուդոլֆի Առաքելյան /արտ. գրակ., մագ. 1-ին կուրս/ - Վ. Մարոյանի անվան կրթաթոշակ:
2. Արիստակեսյան Արևիկ Կարենի /ֆրանս., մագ. 1-ին կուրս/ - Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ,
3. Հարությունյան Նարե Տրիստանի /անգլ. թարգմ., 3-րդ կուրս/ - Հ. Աճառյանի անվան կրթաթոշակ:

2. ԼՍԵՑԻՆ՝

Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս. Գասպարյանը նշեց, որ հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքներն ընթանում են նորմալ հունով, նախապաշտպանությունը հաջող ավարտին է հասցվել, բոլորն արդեն պատրաստ են հաջորդ օրը նշանակած պաշտպանությանը:

3. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետի դեկանը 2016-2017 ուս. տարվա առկա և հեռակա ուսուցման 1-ին քննաշրջանի արդյունքների ամփոփ ներկայացման ընթացքում հորդորեց պրոֆեսորադասախոսական կազմին առավել ուշադիր լինել տեղեկագրերը լրացնելիս բացթողումներ և սխալներ թույլ չտալու համար, գնահատականներն անպայմանորեն փոխանցել ուսանողների գրքույկներում և լուծարքային շրջանում անցկացվող քննություններն անցկացնել նախօրոք ընտրված ասիստենտի մասնակցությամբ:

4. ԼՍԵՑԻՆ՝

Բոլոր ամբիոնների վարիչները զեկուցեցին, որ պետական քննության հարցաշարերը պատրաստ են՝ մանրակրկիտ նայված և վերանայված:

5. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Նաիրա Գասպարյանին տալ թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավարման իրավունք:
- Երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., դոց. Արա Առաքելյանին՝ պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար:
- Տպագրության երաշխավորել Անահիտ Ոսկանյանի «Անգլերեն իրավաբանական ենթալեզվի ուսուցման միջնակության հայեցակերպը» մենագրությունը մենագրությունը:
- Հաստատել Անգլերենի թիվ 1 ամբիոնի հայցորդ Լիանա Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Развитие медиативных навыков при обучении английскому языку в неязыковом вузе (на примере подъязыка технологии пищевых продуктов)»՝ Ժ.02.07 «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել մ.գ.դ., պրոֆ. Ի. Կարապետյանին:
- Հաստատել ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Նելլի Այվազյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Հույզերի լեզվական դրսևորումները քաղաքական խոսույթում /ֆրանսերեն նյութի հիման վրա/»՝ Ժ.02.08 «Ռեմանական լեզուներ» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել մ.գ.թ., դոց. Զ. Հարությունյանին:
- Տպագրության երաշխավորել Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Գայանե Գիրունյանի «Text-Discourse-Knowledge: An Introductory Course in Textlinguistics» դասագիրքը:
- Տպագրության երաշխավորել Գերմանական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Յու. Գաբրիելյանի «Արդի գերմանագիտության քերականական տեսություններ» ուսումնական ձեռնարկը:
- Տպագրության երաշխավորել Միջնակության հաղորդակցության անգլերենի ամբիոնի պրոֆ., բ.գ.դ. Շ. Պարոնյանի և նույն ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Ա. Այունցի «Language and Culture in Academic Context» բուհական դասագիրքը:
- Տպագրության երաշխավորել Միջնակության հաղորդակցության անգլերենի ամբիոնի դասախոսներ Լ. Համբարձումյանի և Ի. Սահակյանի «English at Cultural Crossroads» դասագիրքը:
- Տպագրության երաշխավորել Անգլերենի թիվ 2 ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Ելենա Երզնկյանի «English at Cultural Crossroads» մենագրությունը:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

31 հունվարի 2017 թ.